ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«ВОПРОСЫ ЭСТЕТИКИ». КРИЗИС ЗАПАДНОЕВРОПЕЙСКОГО ИСКУССТВА И СОВРЕМЕННАЯ ЗАРУБЕЖНАЯ ЭСТЕТИКА. ВЫПУСК 8. М., «ИСКУССТВО». 1968. 327 СТР.

«Գեղագիտության հարցերի» նոր, ութերորդ պրակը ուշադրություն է գրավում շոշափվող թեմաների լրջությամբ և արդիականությամբ։ Հեղինակները՝ հայտնի գիտնականներ Ն. Դմիտրիևան, Ա. Լոսևը, Յու. Դավիդովը, Բ. Գիլենսոնը, Ա. Դուլիգան անդրադառնում են ժամանակակից գեղագիտության կարևորագույն հարցերին, որոնք, դժբախտաբար, բավարար չափով չեն լուսաբանված սովետական գեղագիտության մեջ։ Ժողովածուում, հոդվածի ձևով ներկայացված աշխատանքները և՛ իրենց չափերով, և՛ վերլուծության խորությամբ, և՛ նյութի ընդգրկման լայնությամբ դուրս են գալիս գիտական ուսումնասիրության տվյալ ձևի ընդունված շրջանակներից։ Հավանաբար, ավելի ճիշտ կլիներ բնութագրել դրանք իբրև էսսե։ Ժողովածուում հավաքված աշխատանքները լուրջ ուշադրության և մեկնաբանման կարիք են զգում։

XX դարի խոշորագույն գրող և փիլիսոփա Թ. Մանը իր ստեղծագործական կատարելությանն է հասել «Դոկտոր Ֆաուստուս» վեպում։ Դա մի ստեղծագործություն է, որ հավասար չափով կարելի է անվանել և՛ գեղարվեստական, և՛ փիլիսոփայական։ Ընդ որում, ժամանակակից մշակույթի փիլիսոփայության նման խոր բացահայտման մենք չենք հանդիպում նույնիսկ մասնագիտական, գեղագիտական տրակտատներում։ Ն. Դմիտրիևան իր «Թ. Մանը արվեստի ճգնաժամի մասին» աշխատանքում անդրադառնում է «Դոկտոր Ֆաուստուսի» հենց այդ փիլիսոփայական կողմին։ Կանդ առնելով Մանի աշխարհայացքի ընդհանուր գծերի վրա, նա վեպում առանձնացնում է գեղագիտության մի քանի հանգուցային պրոբլեմներ։ Դա ժամանակակից արվեստի և նրա ճգնաժամի, ժամանակակից մտավորականության ողբերգության և Մանի «նոր հումանիզմի» պրոբլեմներն են։ Հատուկ քննվում են «արվեստի փակ ոլորտի ներփակվածության սահմանների ընդլայնման միտումը»՝ մի շատ կարևոր պրոբլեմ և՛ «Դոկտոր Ֆաուստուսի», և՛ ամբողջ ժամանակակից արվեստի ըմբռնման համար։

Վերլուծելով վեպում բարձրացված հիմնական գեղագիտական պրոբլեմները, Ն. Դմիտրիևան դալիս է այն եզրակացության, որ «Դոկտոր Ֆաուստուսը» բուրժուական մշակույթի ճգնաժամի պատմությունն է, մոդեռնիզմի ուսումնասիրությունը՝ փայլուն ներկայացված մեծ գրողի կողմից։

«Վագների մեծ պրոբլեմին» է նվիրված Ա. Լոսևի «Ռիխարդ Վագների պրոբլեմը անցյալում և ներկայում» աշխատությունը։ Վագների անվան հետ կապված են երկարատև և սուր վեճեր երաժշտության տեսության, երաժշտական գեղագիտության, ինչպես նաև մշակույթի փիլիսոփայության շատ այլ պրոբլեմների մասին։ Ավելի քան հարյուր տարի առաջ սկսված այդ վեճերը չեն լռում նաև այսօր։ Իր ընդարձակ հոդվածում Ա. Լոսևը ներկայացնում է այդ պրոբլեմների բավական մանրամասն պատմությունը։ Բերվում են բազմաթիվ արևմտյան, ռուս և սովետական գործիչների և գրողների ասույթներ։ Բնական է, որ հեղինակը մանրամասն կանգ է առնում Վագներ-Նիցշե պրոբլեմի վրա՝ կարողանալով տալ հշգրիտ և ժամանակակից մեկնաբանում մեծ կոմպոզիտորի և փիլիսոփայի բարդ հարաբերություններին։ Խնդիր դնելով ազատել Վագների մտքերը ուշ շերտավորումներից և աղավաղումներից, հեղինակը դիմում է սկզբնաղբյուրին և ամենահեղինակավոր կարծիքների։ Վերջում Լոսևը վերլուծում է «Նիբելունգի մատանին» քառերգությունը, այն համարելով Վագների արվեստի և փիլիսոփայության ընկալման բանալին։

«Արվեստը և էլիտան» հանրահայտ գրքի հեղինակ Յու. Դավիդովը նույնպես իր «Արվեստագետը և օտարացած արվեստը» հոդվածում անդրադառնում է Թ. Մանի «Դոկտոր Ֆաուստուս» վեպին։ Հեղինակը փորձում է պատասխան գտնել հետևյալ առեղծվածին։ Մի կողմից՝ արդեն ահա երկու և կես դար է, որ խոսակցություններ են գնում արվեստի ճգնաժամի, անկման, ան-

հետացման մասին, և հենց ինքը՝ եվրոպական քաղաքակրթությունը, անխուսափելիորեն ստեղծում է պայմաններ, որոնք, կարծես թե, արմատապես բացառում են արվեստի հետագա գոյության ամեն մի հնարավորություն, բայց, մյուս կողմից՝ արվեստը, այնուամենայնիվ պահպանվում է, ընդարձակելով իր ընթերցասրահը, կատարելագործելով իր վարպետությունը ու դրանով իսկ մերժելով ամենամռայլ գուշակությունները։ Քննելով այդ առեղծվածը, Դավիդովը կանգ է առնում հետևյալ խնդիրների վրա՝ Հեգելը և ռոմանտիկները արվեստի ճգնաժամի մասին, XX դարի արևմտաեվրոպական արվեստագետը՝ երես առ երես։ օտարացած արվեստի հետ, արվեստի ճգնաժամը և արվեստագետի պատասխանատվությունը։ Այդ կապակցությամբ նա անդրադառնում է նաև Թեոդոր Ադորնոյի, Սարտրի, Բրեխտի, Ռ. Մանի հայացքներին։

Ամերիկայում և Անգլիայում արդի գրականագիտական կարևոր ուղղություններից մեկն է համարվում «նոր քննադատությունը»։ Այդ խնդիրը լայնորեն լուսաբանված է Ռ. Վեյմանի «Նոր քննադատությունը և ժամանակակից բուրժուական գրականագիտության ճգնաժամը» (Մ., 1965 թ.) աշխատության մեջ։ Նույն խնդրին է նվիրված նաև Բ. Գիլենսոնի «Ակնարկ «նոր քննադատության» մասին» հոդվածը։ Հեղինակը հաստատում է, որ «նոր քննադատության» հիմքում ընկած է իմաժիզմի, ֆրանսիական սիմվոլիզմի «նեոհումանիզմի» և 20-ական թվականների ռուսական ֆորմալիզմի գաղափարների էկլեկտիկ հավաքածուն։ Աշխատությունը կառուցված է գրականագիտական և փիլիսոփայական հարուստ նյութի վրա։

Ա. Գուլիգայի ոչ մեծ հոդվածը նվիրված է Ֆրանց Կաֆկայի փիլիսոփայական արձակի վերլուծությանը։ Բնական է, որ հեղինակին չի հաջողվել բնութագրել այդպիսի մի խոր և բարդ երևույթ։ Առանձին ստեղծագործությունների վերլուծությունը միայն ընդգծել է Կաֆկայի փիլիսոփայության որոշ տեսանկյուններ։

СОДРУЖЕСТВО НАУК И ТАЙНЫ ТВОРЧЕСТВА. СБОРНИК СТАТЕЙ. М., «ИСКУССТВО». 1968. 450 СТР.

Գոյություն ունե՞ն արդյոք գաղտնիքներ արվեստում և կարո՞ղ են նրանք հայտնաբերվել։ Այդ հարցին պատասխանում են տարբեր ձևով։ Ժողովածուում տեղավորված են այնպիսի հեղինակների հոդվածներ, որոնք կարծում են, որ այդ «գաղտնիքները գոյություն ունեն և, ըստ էության, կարող են բացահայտվել»։ Նրանց հիմնական նպատակն է՝ չուսումնասիրված կամ քիչ ուսումնասիրված հարցերի առաջադրումը։

Ժողովածուն կազմված է չորս բաժիններից։ Առաջինում տրվում են ստեղծագործության համալիր ուսումնասիրման ընդհանուր տեսական հարցեր։ Այստեղ տեղավորված են Բ. Մեյլախի «Գեղարվեստական ստեղծագործության համալիր ուսումնասիրման ուղիները», Ա. Իեզուիտովի «Սոցիոլոգիա և բնագիտություն», Բ. Կուբլանովի «Գեղագիտություն և հոգեբանություն», Բ. Ռունինի «Գիտության տրամաբանությունը և արվեստի տրամաբանությունը», Մ. Սապարովի «Գեղարվեստական ստեղծագործությունն իբրև ստրուկտուրա» և այլ հոդվածներ։

Երկրորդ բաժինը պարունակում է հոդվածներ՝ նվիրված ստեղծագործության հոգեբանության հարցերին, գրականության, գեղարվեստի, կինոյի, ճարտարապետության մեջ։ Այստեղ պետք է նշել Ն. Ֆորտունատովի «Ստեղծագործական պրոցեսը և ընթերցողի ընկալումը», Վ. Գուսևի «Կոլեկտիվ ստեղծագործության հոգեբանությունը», Գ. Կոզինցևի «Բեմը, գիրքը, էկրանը» և այլ հոդվածներ։

Ժողովածուի երրորդ բաժնում տեղադրված՝ Լ. Սալյամոնի «Էմոցիոնալ-գեղագիտական պրոցեսների ֆիզիոլոգիայի մասին» հոդվածում քննվում են արվեստի ուսումնասիրման մեջ ֆիզիոլոգիայի կիրառման հարցերը։

Չորրորդ բաժինը նվիրված է ստեղծագործության ուսումնասիրման մեջ ամենաարդիականին՝ կիբերնետիկական և մաթեմատիկական մեթոդների կիրառման հարցերին։ Բաժնում կան ինչպես տեսական բնույթ ունեցող հոդվածներ, օրինակ՝ Բ. Եգորովի «Գրականագիտությունը և մաթեմատիկական մեթոդները», Գ. Վասյուտոչկինի «Գեղարվեստական և մաթեմատիկական մտածողության մասին», այնպես էլ կոնկրետ՝ Ա. Կոլմոգորովի և Ա. Պրոխորովի «Ռուս կլասիկ տաղաչափության հիմունքների մասին» և այլն։

Գիտության տարբեր ասպարեզների պատկանող հեղինակներ ժողովածուում աշխատում են միասնական մեթոդոլոգիական հիմքի վրա։ Թեև որոշ հոդվածներ կրում են բանավեճային բնույթ, այնուամենայնիվ, նման ժողովածուի հրատարակումը մեզ մոտեցնում է ստեղծագործության գաղտնիքների ակունքներին։

Г. УЭЛЛС. КРАХ ПСИХОАНАЛИЗА. ОТ ФРЕЙДА К ФРОММУ М., «ПРОГРЕСС». 1968. 287 СТР.

Պսիխոանալիզը վճռական ազդեցություն է ունեցել Արևմուտքի գիտակցության կազմավորման վրա։ ԱՄՆ-ը դարձավ պսիխոանալիզի գաղափարների երկրորդ հայրենիքը, ուր դրանով ներծծվեց ամբողջ ազգային մշակույթը։ Հ. Ուելսը պսիխոանալիզի խոշորագույն մասնագետներից է։ Նրա առաջին գիրքը՝ «Պավլով և Ֆրեյդ» հրատարակվել է Մոսկվայում 1959 թ.։ Այդ գրքում տրված էր ֆրեյդիզմի ընդհանուր բնութագիրը։ Նոր գրքում հեղինակը ստեղծել է պսիխոանալիզի պատմությունը ԱՄՆ-ում, որտեղ պսիխոանալիզի ավանդական ձևը վաղուց ենթարկվել է խիստ վերակառուցման։

Աշխատանքի առաջին մասը նվիրված է Ֆրեյդին և ամերիկյան կլասիկ պսիխոանալիզին, մասնավորապես մանրամասն պատմում է ամերիկյան պսիխոանալիզի հիմնադիր Ա. Բրիլլի մասին։ Գրքի մնացած էջերը նվիրված են ֆրեյդիզմի խոշոր մասնագետներ Կարեն Հորնիին և Էրիխ Ֆրոմմին։ Հենց այս երկու պսիխոանալիտիկները վճռական ազդեցություն ունեցան պսիխոանալիզի զարգացման վրա ԱՄՆ-ում, պսիխոանալիզի՝ «կենսաբանականից» դեպի «մշակութայինը» փոխանցման հարցում։

Հ. Ուելսի խոր և օբյեկտիվ ուսումնասիրությունը պատկանում է համաշխարհային դրականության մեջ պսիխոանալիզի մասին լավագույն աշխատությունների թվին։